ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 2/փ - 247
հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի
ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքը (Ոսկեպար բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխության վերաբերյալ
(Նոյեմբերյան համայնքի (Ոսկեպար բնակավայրի) գոտևորման նախագծի մասով)

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ *ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքը (Ոսկեպար բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Տավուշ-1 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը*՝

Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը
11-049-0126-0001 կադաստրային ծածկագրից 0.21328 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահող	11-049-0126-0001 կադաստրային ծածկագրից 0.21328 հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողեր

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Անհրաժեշտ է հետագա գործառույթներն իրականացնել հաշվի առնելով ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության, ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից ներկայացված պահանջները (կցվում են):

4. ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյանի համայնքապետին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել Ոսկեպար բնակավայրի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի Ոսկեպար բնակավայրի հաստատված գլխավոր հատակագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ՝		
		Ե.Վարդանյան
Հանձնաժողովի քարտուղար՝		
		Լ. Առաքելյան

Երևան, « 8 » «օգոստոսի» 2025 թ.